


ԱՊԱԳԱՅԻ ՊԼԱՆՆԵՐ, ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ



Բովանդակություն

Ներածական խոսք

Մենք դա կարող ենք

Ի՞նչն է մեզ խանգարում

Ի՞նչ արժեն մեր երազները

«Մեր մաքուր արժեքը»

Սկզբում վճարենք մեզ

Թաքնված հնարավորություններ

Փողի ժամանակային արժեքը

Բաղադրյալ տոկոսների «հրաշքը»

Հապաղման գինը

Կորուստներ ու փաստացի եկամուտներ

Խաղամոլություն՞, թե՞ ներդրում

Փողի հավելաճը եւ տոկոսը

Ռ-իսկ եւ եկամուտ

Բաժնետոմսեր եւ պարտատոմսեր

Մեր հիմնական սխալները

Ամփոփում

Հարգելի ընթերցող

Ի հարկե փողը չի աճում, առավել եւս, պահարանում կամ բարձրի տակ: Սակայն, իրականում, այն կարող է աշխատել եւ աճել, եթե մենք տնտեսենք եւ խելամիտ ներդրումներ կատարենք :

Բոլոր մարդիկ ձգտում են լինել ֆինանսապես ապահովված եւ ապրել բարեկեցիկ կյանքով: Սակայն միայն փորձաքիվ հաջողակներն են որոշակի ժառանգություն ստանում կամ ունենում կայուն եւ արդյունավետ եկամտի աղբյուր: Այնուամենայնիվ, անկախ ժառանգության կամ կայուն եկամտի աղբյուրի առկայությունից, բոլորիս համար օգտակար կլինի հասկանալ, թե ինչպե՞ս կառուցել մեր ապագա ֆինանսական ապահովությունն ու բարեկեցությունը: Դրա համար պետք չէ հանճար լինել: Պետք է միայն իմանալ, որ շատերի համար ֆինանսական ապահովության ձեռքբերման լավագույն եղանակը շրջահայացորեն կատարված խնայողություններն ու ներդրումներն են: Մեզ պարզապես անհրաժեշտ է որոշել, թե ինչու՞ եւ ինչպե՞ս խնայել եւ

ու՞ր ներդնել տնտեսված միջոցները: Կարելու չէ, թե ինչքան փող ունենք: Կարելուը ներդրումների աշխարհում ճիշտ կողմնորոշվելն ու սկսելն է:

Շատերս ենք խոսում տնտեսումների, խնայողությունների եւ ներդրումների մասին, սակայն քչերն են տարբերում դրանք միմյանցից: Սկզբունքորեն դրանք, իրոք, նման են միմյանց: Տնտեսումը մեր չժախսած գումարը կամ եկամուտն է: Խնայողությունը մեր տնտեսած եկամտի այն մասն է, որը մենք փորձում ենք պահել հնարավորին չափ հուսալի միջոցներով եւ առանձնապես չենք կարելուորում սպասվելիք եկամտաբերությունը: Ներդրումը մեր տնտեսած կամ խնայած գումարի այն մասն է, որով մենք, դիմելով որոշակի լրացուցիչ ռիսկի, ձեռք ենք բերում համեմատաբար ավելի մեծ եկամուտ խոստացող ապրանքներ:

Այս գրքույկը կարդալով, մենք որոշակի պատկերացում կկազմենք խնայողությունների եւ ներդրումների հիմունքների մասին: Կիմանանք, որ լրացուցիչ եկամուտներ ստանալու համար անհրաժեշտ է տնտեսել վաստակած գումարների մի մասը եւ խելամիտ ներդրումներ կատարել: Կհամոզվենք, որ տնտեսած փողն աշխատեցնելու լավագույն եղանակներից մեկը արժեթղթերում ներդրումներ կատարելն է, ինչը կարող է ներդրողին ապահովել պարբերական տոկոսային եկամտով, ներդրված դրամագլխի աճով կամ երկուսը միասին: Որոշակի գաղափար կկազմենք այն մասին, թե ո՞ր արժեթղթերում եւ ինչպե՞ս ներդնել խնայված միջոցները: Կամ ինչպե՞ս ստուգել եւ ընտրել ներդրումային գործիքներն ու ներդրումային ծառայություններ առաջարկողներին, որպեսզի հերթական անգամ չդառնանք կեղծիքի կամ սխալների գոհ:

Ոչ ոք չի կարող երաշխավորել, որ մեր ներդրումներն անպայման մեծ հարստություն կբերեն մեզ: Սակայն, եթե սովորենք խնայողությունների եւ ներդրումների հիմունքները, ապա ի վիճակի կլինենք «խաբված» ավանդատուից դառնալ հաջողակ ներդրող, տարիների ընթացքում ձեռք բերել լրացուցիչ ֆինանսական ապահովություն եւ վայելել մեր տնտեսած միջոցների կառավարման դրական արդյունքները:

Մենք դա կարող ենք

Շատերի համար ֆինանսական ապահովության հիմնական աղբյուրը խելամիտ խնայողություններն ու ներդրումներն են: Հաջողակ ներդրողներից եւ մեզ հայտնի մեծահարուստներից ու բարերարներից շատերը ներդրումների վերաբերյալ նախնական գիտելիքներ ձեռք են բերել նմանատիպ գրքույկներից:

Նույնիսկ համեստ ներդրումներից սկսելով, բազմաթիվ մարդիկ տարբեր երկրներում հասնում են ֆինանսական ապահովության: Խնայողությունների ու ներդրումների միջոցով նրանք կարողանում են գնել տուն, վճարել երեխաների ուսման համար, ապահովել ֆինանսապես ապահովված կյանք անաշխատունակության, գործազրկության կամ թոշակի անցնելու դեպքերում եւ այլն: Եթե տարբեր, այդ թվում նաեւ տնտեսապես մեր երկրից ավելի թույլ զարգացած, երկրներում դա հաջողվում է շատերին, ապա պետք է, որ մեր երկրում հաջողվի նաեւ մեզ:

Խնայողությունների եւ ներդրումների շնորհիվ մեր տնտեսած միջոցները մեզ լրացուցիչ եկամուտներ բերելուց բացի, նպաստում են նաեւ գործարարության ու երկրի տնտեսության զարգացմանը: Իսկ դա լրացուցիչ կերպով նպաստում է բոլորիս բարեկեցության բարելավմանը:

Ի՞նչն է մեզ խանգարում

- «Ես դեռեւս ժամանակ ունեմ ներդրումների մասին մտածելու համար»:
- «Ումի՞ց եմ հետ ստանալու իմ ներդրած գումարները, փողս նորից չե՞մ կորցնի»:
- «Ի՞նչ ներդրում, պարտքերի մեջ թաղված ենք: Ծայրը ծայրին չենք հասցնում»:
- «Ու՞ր ներդնենք, հոգնեցինք խաբվելով ու փող կորցնելով»:
- «Վաուչերների ներդրումից ի՞նչ հասկացանք, որ հիմա էլ փող ներդնենք»:



- «Բանկերից հետ չստացած փողերը քիչ են, հիմա էլ բաժնետիրական ընկերություն, բաժնետոմս, ներդրում, դիվիդենտ, բրոքեր, բորսա, գնանշում»:

Խնայողությունների ու ներդրումների նկատմամբ շատերիս վերաբերմունքը բնութագրող այս եւ մնանօրինակ այլ բնորոշ արտահայտություններն, իրենց մեջ դառը ճշմարտության մեծ բաժին պարունակելով հանդերձ, մեզ չեն օգնում՝ լուծելու մեր ապագայի ֆինանսական խնդիրները: Իսկ ինչ՞ կփոխվի, եթե այսպիսի ավելի գործնական «մտքեր պտտվեն մեր գլխում»՝

- «Ապագայում փող ունենալու համար այսօրվանից պետք է տնտեսեմ և հստակեցնեմ նպատակներս ու քայլերս»:
- «Կարող եմ սկսել քչից և հետևել, թե ինչպես են աճում իմ փորձնական խնայողություններն ու ներդրումները:
- Նույնիսկ ամենաերկար ճանապարհը սկսվում է առաջին քայլից»:
- «Եթե նախկինում սխալվել եմ և փողերս կորցրել, ապա դա չի նշանակում, որ միշտ այդպես է լինելու: Այժմ ավելի ուշադիր կլինեմ: Չէ՞ որ շատերն են ներդրումների շնորհիվ հարստանում»:

Այսպես մտածելու դեպքում մենք հավանաբար կդիմենք նաև գործնական քայլերի և առաջին հերթին կփնտրենք խնայողություններ ու ներդրումներ կատարելուն խանգարող հիմնական պատճառները:

Ի՞նչ արժեն մեր երազները

Եթե մենք չգիտենք, թե ու՞ր ենք գնում, ապա ցանկացած ճանապարհով շարժվելիս կարող ենք հայտնվել բոլորովին անցանկալի վայրում: Ե՛հիշտ ճանապարհի ընտրելու և ընթացքում այն վերահսկելու համար պետք է հստակեցնել նպատակները, գնահատել հնարավորությունները և պլանավորել քայլերը: Վերոհիշյալ համընդհանուր սկզբունքը գործում է նաև խնայողությունների և ներդրումների աշխարհում: Ուստի, եկեք մտորենք, թե ի՞նչ նպատակով են ընդհանրապես մարդիկ տնտեսում և ներդրումներ կատարում: Կամ, «ի՞նչ արժեն» մեր երազներն ու ապագայի պլանները: Մասնավորապես, որքա՞ն գումար է մեզ անհրաժեշտ՝

- մեր կամ երեխաների ուսման ծախսերը հոգալու համար,
- տուն, մեքենա կամ կահույք գնելու համար,
- երեխաներին ամուսնացնելու համար,
- հանգստի կամ շրջագայության համար,
- անաշխատունակության, գործազրկության կամ բուժման համար,
- ծնողներին խնամելու համար,
- թոշակի անցնելու համար և այլն:

Այս խնդիրների մասին վաղօրոք չմտածելը նման է հայտնի թռչնի վարքագծին: Արդյունքում, բոլորս գիտենք բազմաթիվ պատմություններ, թե ինչպես սա կամ նա չկարողանալով լուծել «անսպասելի» ֆինանսական խնդիրները, «տոկոսի տակ ընկավ», «ունեցվածքը ջրի գնով վաճառեց» և այլն: Նման պատմություններն անհամեմատ ավելի քիչ կլինեն, եթե ժամանակին հստակեցնենք մեր

նպատակները, գնահատենք անհրաժեշտ ֆինանսական միջոցները և խնայողությունների կամ ներդրումների միջոցով կուտակենք դրանք: Սա «տոկոսի տակ ընկնելուց» ավելի անցավ և արդյունավետ գործընթաց է: Այս ճանապարհով մենք նույն խնդիրների լուծման և մեր նպատակների իրականացման համար ավելի քիչ գումար կծախսենք, «ավելորդ փողեր քամուն չենք տա» և լրացուցիչ գումարներ կկուտակենք:

Խնայողությունների և ներդրումների բազմաթիվ հնարավորություններից մեր պահանջներին առավելագույնս համապատասխանողների ճիշտ ընտրությունը, ինչպես նաև ներդրումների պլանավորումը և իրագործումը, կամ «ինչքա՞ն և ինչպե՞ս խնայել և ներդնել» հարցերի պատասխանները, անմիջականորեն կախված են յուրաքանչյուրիս անձնական հնարավորություններից, ներդրումային նպատակների առանձնահատկություններից, տարիքից, ռիսկերի դիմակայման ունակությունից և այլն:

Որպես օրինակ քննարկենք շատերիս առջև ծառայած մի քանի կարևորագույն խնդիրներ: Նախ, թոշակի անցնելու կամ առանց աշխատանքի մնալու հեռանկարի մասին: Միայն քչերն ունեն բավականաչափ միջոցներ մեկի կամ մյուսի համար: Շատերս ստիպված ենք այդ միջոցները կուտակել բազմաթիվ տարիների ընթացքում: Դրա համար մենք նախ պետք է հստակեցնենք, թե քանի՞ տարի հետո ենք պատրաստվում անցնել թոշակի: Որքա՞ն փող ենք ուզում ունենալ թոշակի անցնելու ժամանակ: Այդ նպատակով որքա՞ն փող պետք է տնտեսել և ներդնել յուրաքանչյուր ամիս կամ տարի: Տնտեսելու և ներդրումներ կատարելու ի՞նչ հնարավորություններ ու հեռանկարներ ունենք: Ի՞նչ ռիսկերի ենք պատրաստ դիմակայել ներդրումներից ստացվող եկամուտներն առավելագույնին հասցնելու համար: Այս և հարակից մի շարք հարցերին ճիշտ պատասխանելը, կենսաթոշակային կարիքների ճշգրտումը և խնայողությունների ու ներդրումների համապատասխան սխեմայի մշակումն ու իրագործումը կարող են էական նշանակություն ունենալ մեր հետագա ֆինանսապես ապահով ծերության համար: Չխորանալով անհատական պլաններ մշակելու հարցերում, նշենք ևս մի քանի լրացուցիչ փաստեր կենսաթոշակի պլանավորման կարևորության մասին.

- *Ընդհանուր առմամբ, կենսաթոշակի անցնելուց հետո նախկին կենսածեղ պահպանելու նպատակով մեծամասնության համար պահանջվում է նախկին տարեկան եկամտի մոտ 75 տոկոսը:*
- *Թոշակառուների մեծ մասը զգում են կենսաթոշակային խնայողությունների պակաս: Մասնավորապես, Միացյալ Նահանգներում, սոցալվճարները և կենսաթոշակը ծածկում են ապահովված թոշակառուներին անհրաժեշտ եկամտի միայն 40- 50 տոկոսը: Մնացած 50-60 տոկոսը լրացվում են թոշակառուների անձնական խնայողությունների միջոցով:*
- *Տնտեսված գումարները օգտագործվում են որոշակի տարիներ հետո, որի ընթացքում արժեզրկման պատճառով կյանքը թանկանում է:*

Այժմ քննարկենք ուսման վարձերի խնդիրը: Այս ցավոտ խնդրի հետ առնչվողներից շատերը զգացել են, թե ինչքան ծանր է, երբ ուսման վարձը չվճարելու համար երեխային «հեռացնում են ինստիտուտից», իսկ վճարելու համար տնտեսված գումար, հովանավոր կամ «տոկոսով փող տվող» չկա: Նման իրավիճակներից խուսափելու նպատակով կրթության համար անհրաժեշտ միջոցները ևս պետք է պլանավորվեն և կուտակվեն նախապես: Անհրաժեշտ գումարի չափը նախապես հաշվարկելիս պետք է հաշվի առնել, որ այն պետք է գալու որոշակի տարիներ հետո: Այդ ընթացքում ուսման վարձերը հավանաբար աճելու են, ուսման վարձը պետք է բաշխվի ուսման տարիների միջև և այլն: Այս հարցերը պարզելուց և պահանջվող գումարները հաշվարկելուց հետո միայն մենք կարող ենք որոշել, թե ինչպիսի՞ խնայողությունների և ներդրումների միջոցով կարող ենք հասնել մեր նպատակին:

Ինչպես ցույց են տալիս քննարկված օրինակները, մեր նպատակների իրականացումն ընդհանուր առմամբ բաղկացած է հետևյալ հաջորդական փուլերից.

- ***Նպատակների իրականացման ֆինանսական պլանի մշակում:***
- ***Խնայողությունների ու ներդրումների համապատասխան մարտավարության որդեգրում:***
- ***Ներդրումային գործընթացի իրականացում և ընթացքի վերահսկում:***

Ապագայի պլանավորման ժամանակ նպատակներն ու ֆինանսական կարիքները պետք է դասակարգել ըստ կարևորության, պահանջվող գումարների մեծության, ժամկետների և այլն: Առանց վերը նշված քայլերի հնարավոր չէ որոշել խնայողությունների և ներդրումների այն տարբերակները, որոնք համապատասխանում են մեր նպատակներից յուրաքանչյուրին և դրանց հասնելու համար հատկացված ժամանակամիջոցներին:

«Մեր մաքուր արժեքը»

Հնարավոր չէ որևէ ուղևորության մեկնել առանց որոշելու, թե որտեղի՞ց ենք սկսում այն: Այս առումով բացառություն չէ նաև ներդրումային գործունեությունը: Այն սկսելուց առաջ անհրաժեշտ է պարզել, թե մեր նպատակները որքանով են համապատասխանում մեր ֆինանսական վիճակին ու հնարավորություններին: Մեր ֆինանսական հնարավորությունների գնահատման համար անհրաժեշտ է հաշվել տվյալ ժամանակահատվածի մեր ֆինանսական մուտքերը (եկամուտները, ստանալիքները), ելքերը (ծախսերը, առկա պարտավորությունները), ինչպես նաև դրանց տարբերությունն ու տնտեսման հնարավորությունները:

Ֆինանսական վիճակի գնահատման տարածված չափանիշներից մեկը մեր մաքուր արժեքն է: Այն որոշելու համար ստորև բերված աղյուսակի առաջին սյունակում գրենք, թե ի՞նչ ունենք: Դրանք կլինեն մեր ակտիվները կամ ունեցվածքը: Մյուս սյունակում գրենք մեր պարտքերը կամ պարտավորությունները: Եթե մեր ակտիվները պարտավորություններից ավելի մեծ են, ապա մեր «մաքուր արժեքը դրական» է, և մենք «ինչ որ բան արժենք»: Եթե մեր պարտավորություններն են ակտիվներից ավելի մեծ, ապա մեր «մաքուր արժեքը բացասական» է:

Պետք չէ հուսահատվել, եթե մեր եկամուտների ու ծախսերի տարբերությունը կամ «մաքուր արժեքը» բացասական լինի: Հուսադրվենք նրանով, որ այդ մասին հիմա գոնե գիտենք: Դա ևս առաջընթաց է: Չէ՞ որ անորոշության մեջ մնալն ավելի է վատթարացնում մեր վիճակը:

Մեր մաքուր արժեքի որոշման բաղադրիչները			
Մեր ունեցվածքը		Մեր պարտավորությունները	
Կազմը	Ընթացիկ արժեքը	Կազմը	Գումարը
<ul style="list-style-type: none"> - Դրամական միջոցներ - Բանկային հաշիվներ - Խնայողություններ - Ապահովագրական մուծումներ - Ակնկալվող ստանալիքներ - Տուն և այլ անշարժ գույք - Ներդրումներ - Անձնական գույք - Այլ <p style="text-align: center;">Ընդամենը</p>		<ul style="list-style-type: none"> - Գրավ դրված գույք - Կրեդիտային քարտեր - Բանկային վարկեր - Չվճարված գնումներ - Պարտքեր - Այլ <p style="text-align: center;">Ընդամենը</p>	

Լավ կլինի, որ պարբերաբար վերահաշվարկենք մեր եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռն ու «մաքուր արժեքը», որպեսզի հետևենք մեր առաջընթացին կամ մեր նպատակների ու հնարավորությունների համապատասխանության փոփոխությանը: Եթե մենք ունենանք նաև ֆինանսական առողջացման կամ ներդրումային պլան, ապա կոզևորվենք, երբ պարզենք, որ շարժվում ենք այդ պլանի համաձայն և շուտով դրական «մաքուր արժեք» ենք ունենալու:

Սկզբում վճարենք մեզ

Գաղտնիք չէ, որ շատերիս եկամուտներն ավելի փոքր են քան, անհրաժեշտ ծախսերը: Այս պայմաններում իրոք դժվար է միջոցներ գտնել տնտեսելու կամ ներդրումներ կատարելու համար: Իսկ ին՞չ անել այդ դեպքում: **Տարրական կարիքների բավարարման նպատակով ծախսվող յուրաքանչյուր լուման տնտեսելու փոխարեն պետք է սովորենք «սկզբում վճարել մեզ»:** Այդ նպատակով պետք է մեր **Ֆինանսական պլանի ծախսերի ցուցակում ավելացնենք «մեզ վճարվելիք գումարները»:** Իրականում, դրանք պետք է լինեն ցուցակի առաջին տողերը, այսինքն առաջինը մեր մասին պետք է հոգանք և մեզ վճարենք: Իսկ առաջինը մեր մասին հոգալու և մեզ վճարելու համար ծախսերի ցուցակը պետք է սկսենք «խնայողություններ և ներդրումներ» լրացուցիչ հոդվածներով:

Ֆինանսական պլան			
Մեր եկամուտները		Մեր ծախսերը	
Կազմը	Գումարը	Կազմը	Գումարը
<ul style="list-style-type: none"> - Աշխատավարձ - Թոշակ, նպաստ - Տոկոսներ բանկային ավանդներից - Տոկոսներ պարտատոմսերից - Եկամուտներ մասնավոր բիզնեսից - Դիվիդենդներ բաժնետոմսերից - Այլ եկամուտներ 		<ul style="list-style-type: none"> - Խնայողություններ - Ներդրումներ - Բնակարանի վարձ - Ջեռուցման և այլ կոմունալ ծախսեր - Հարկեր - Վարկերի սպասարկում - Սնունդ - Տրանսպորտային ծախսեր - Կենցաղային և այլ ապրանքներ - Կրթություն - Առողջություն և հանգիստ - Այլ ծախսեր 	
Ընդամենը		Ընդամենը	

Այո, մեզ կատարվող վճարումները մեր խնայողություններն ու ներդրումներն են, որոնք պետք է լինեն առաջինները մեր ծախսերի շարքում: Այսպիսով, եկեք այսուհետ, որպես օգտակար սովորույթ, մեր ֆինանսական պլանների ծախսերի առաջին տողերում նախատեսենք մեզ վճարվելիք կամ ներդրումների ու խնայողությունների համար հատկացվող գումարները: Բազմաթիվ մարդիկ, տարբեր երկրներում, տնտեսելու և ներդնելու սովորույթ ձեռք են բերում հետևելով «սկզբում միշտ վճարենք մեզ և մեր ընտանիքին» սկզբունքին: Առաջին հերթին մեզ վճարելու հոգեբանական դժվարությունները հաղթահարելու նպատակով շատերը թույլ են տալիս, որ իրենց գործատուն, բանկը կամ կինը նախատեսված գումարը վաստակից նախապես պարբերաբար առանձնացնեն և ձևակերպեն խնայողական կամ ներդրումային հաշվի վրա: Այսպես վարվելով մենք ևս կարող ենք խուսափել «մեզ վճարելուց առաջ» մեր ամբողջ վաստակը այլ նպատակներով ծախսելուց և հնարավոր է, որ նույնիսկ չզգանք մեր ծախսերում լրացուցիչ հոդվածի ավելացումը:

Թաքնված հնարավորություններ

Իսկ ի՞նչ անել, եթե ծախսերի ու եկամուտների պլանավորման ընթացքում մեկ անգամ ևս համոզվենք, որ ոչինչ չի մնում տնտեսելու և «առաջինը մեզ վճարելու» համար: Հուսահատվելու և ոչինչ չձեռնարկելու փոխարեն պետք է ձգտենք լրացուցիչ վաստակի աղբյուր գտնել կամ կրճատել մեր առօրյա ծախսերն ու տնտեսել վաստակած գումարները: **Ըստ էության տնտեսված գումարները ևս վաստակած գումարներ ու եկամուտներ են և, ի վերջո, տնտեսածն է որոշում մեր հարստության չափը:** Ուստի լրացուցիչ վաստակի խնդիրը թողնենք մի կողմ և փորձենք պարզել, թե տնտեսելու ինչպիսի՞ հնարավորություններ ունենք: Ծախսերի պլանավորման և դրանց ուշադիր հետևելու դեպքում շատերիս հաճելի անակնկալ կմատուցի տնտեսելու «թաքնված» հնարավորությունների առատությունը: Սակայն, վաստակածից ավելի քիչ ծախսելու և տնտեսելու համար անհրաժեշտ է լինել կարգապահ, տնտեսումը դարձնել ամենօրյա սովորություն և հետևել ծախսերը սահմանափակող որոշակի օգտակար խորհուրդների:

- *Չվերցնել պարտք կենցաղային ապրանքների գնումների և ընթացիկ ծախսերի համար:*
- *Պլանավորել, գրանցել և համեմատել պլանի հետ բոլոր ծախսերը:*
- *Հանել բյուջեից կյանքի մակարդակի վրա չազդող ծախսերը:*
- *Խուսափել տնտեսված գումարը այլ նպատակով ծախսելուց:*
- *Գնել զեղչով վաճառվող կամ էժան իրեր:*
- *Խուսափել առանց հիմնավոր պատճառների նոր իրեր գնելուց:*
- *Տնտեսել և կուտակել գնումների ժամանակ հետ ստացված մանրը:*
- *Հրաժարվել ծախսեր պահանջող վնասակար սովորություններից և այլն:*



Այժմ փորձենք ճշտել այս խորհուրդներից մի քանիսի գործնական օգտակարությունն ու արդյունավետությունը: Նախ պարզենք, թե ամենօրյա ոչ կարևոր մանր-մունր քմահաճույքները որքա՞ն են ավելացնում մեր ծախսերը: Առաջին հերթին հենց այդ ծախսերը մենք պետք է կրճատենք և տնտեսված միջոցներն ուղղենք դեպի խնայողություններն ու ներդրումները:

Օրինակ, ի՞նչ արժի օրական մի երկու բաժակ սուրճը կամ մեկ տուփ սիգարետը: Եթե ամեն օր 550 դրամով (մոտ 1 դոլար) գնում ենք երկու բաժակ սուրճ կամ մեկ տուփ սիգարետ, ապա մի տարվա մեջ այդ գումարը դառնում է 200 հազար դրամ (մոտ 365 դոլար): Եթե տնտեսենք այդ 200 հազար դրամը և տարեկան 12 տոկոսով ավանդ ձևակերպենք որևէ բանկում, ապա այդ գումարն ընդամենը 6 տարի հետո կկրկնապատկվի:

Այսպիսով, եթե հետևենք մեր ծախսերին և գտնենք ընթացիկ ծախսերի տնտեսման ուղիներ, ապա կարող ենք գգալիորեն բարելավել մեր բարեկեցությունը: Եթե անգամ մեկ բաժակ սուրճը կարող է այդքան մեծ արդյունք տալ, ուրեմն պետք է փորձել գտնել քիչ ծախսելու և ներդրումներ կատարելու լրացուցիչ այլ միջոցներ ևս:

Բննարկենք պարտքով ապրանքներ գնելու սովորույթը, որի պատճառով մենք ականա ավելի շատ ենք վճարում նույն ապրանքի համար:

Այսպես, եթե պարտքով գնում ենք 100 հազար դրամ արժողությամբ հեռուստացույց և գումարը

վճարում ենք երկու տարում 18% կուտակվող տոկոսավճարով, ապա հեռուստացույցի համար մենք փաստորեն վճարում ենք ավելի քան 139 հազար դրամ:

Այժմ քննարկենք ոչ առաջին անհրաժեշտության ապրանքների կամ չպլանավորված հանկարծակի գնումների խնդիրը:

Օրինակ, սովորաբար, խաղալիքներ, մոդայիկ հագուստ և ոչ առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ գնելիս մենք չենք մտածում, թե արդյոք ի՞նչ կարծենան դրանք մի քանի տարի անց, և ներդրումների դեպքում ինչքա՞ն կաճեին տվյալ պահին գնումների վրա ծախսած գումարները: Մինչդեռ, եթե ոչ հրատապ գնումներից խուսափելու շնորհիվ «մի կողմ դրված» գումարը ներդնենք թեկուզ տարեկան 12 տոկոսով, ապա 6 տարի հետո այն կկրկնասպասկվի և ավելի շատ ապրանքներ գնելու հնարավորություն կտա մեզ: Այսպես վարվելու համար կարևորը յուրաքանչյուր գնումից առաջ մտածելն է:

Չպլանավորված գնումներ կատարելու հանկարծակի ցանկության դեպքում դրանք պետք է հետաձգել առնվազն մեկ օր, որից հետո սովորաբար այլևս չենք ցանկանա մույն գնումը կատարել:

Ամփոփելով ծախսերի կրճատմանն առնչվող խորհուրդները, ավելացնենք, որ այս հարցում պետք է նաև որոշակի խոհեմություն ու ճկունություն ցուցաբերել և հիշել, որ եթե մենք մեկ ամիս շարունակ ամեն օր ուտում ենք միայն լոբի կամ բրինձ, ապա կամ չափազանց շատ ենք տնտեսում կամ առայժմ ի վիճակի չենք «վճարել մեզ»:

Այժմ, երբ կարողանում ենք տնտեսել որոշակի գումար, «խաբված» ավանդատուներից կամ լոտո խաղացողներից խաբված ներդրողների չվերածվելու համար, անհրաժեշտ է պարզել, թե ինչպե՞ս «աշխատեցնել» փողը ներդրումների ու խնայողությունների աշխարհում, ինչո՞վ է պայմանավորված այդ աշխատանքի արդյունավետությունը և որո՞նք են մեր ընտրության հնարավորությունները:

Փողի ժամանակային արժեքը

Արդյո՞ք 100 դրամը միշտ 100 դրամ արժի: Կամ թեկուզ մեկ դոլարը, միշտ մեկ դոլա՞ր արժի: Մա շատ կարևոր ու պարզ հարց է: Անշուշտ, միշտ չէ, որ 100 դրամն արժի 100 դրամ: Երբեմն 100 դրամն ունի 91, երբեմն էլ 109 դրամի կամ այլ արժեքներ: Ինչպե՞ս կարող է դա պատահել: Օրինակ, արդար կլինի՞, եթե մենք մեր 100 դրամանոց թղթադրամի դիմաց ստանանք 91 կամ 109 դրամ:

Իրոք, փողի արժեքը մշտապես փոփոխվում է: Փողի ժամանակային արժեքի վրա մշտապես ազդող ամենակարևոր գործոնները նրա «աշխատել-չաշխատելն» ու արժեզրկումն են: Եթե մեզ «առանց տոկոսի» պարտք են 100 դրամ, ապա մենք կցանկանայինք, որ այն վերադարձվեր ոչ թե մեկ տարի հետո, այլ այսօր: Փողի գնողունակությունը նվազեցնող արժեզրկման պատճառով մեկ տարի հետո մույն փողի արժեքը ավելի ցածր կլինի այսօրվա արժեքից: Տարբեր արագությամբ և օրինաչափություններով արժեզրկվում են ինչպես դրամը, այնպես էլ դոլարը և մյուս դրամական միավորները: Եթե դոլարի ինֆլյացիան կազմում է, ենթադրենք, տարեկան 2 տոկոս, ապա մեկ տարվա ընթացքում գները դոլարով միջին հաշվով կաճեն 2 տոկոսով: Մեկ տարի հետո դոլարի գնողունակությունը 2 տոկոսով ցածր կլինի և այսօրվա մեկ դոլարը կունենա 98 ցենտի արժեք: Իսկ մեր դրամը՞: Ընդհանուր առմամբ դրամի արժեզրկումն ավելի մեծ է, սակայն գործում են մույն օրինաչափությունները: Եթե դրամի արժեզրկումը մույն ժամանակահատվածում կազմում է տարեկան 9 տոկոս, ապա մեկ տարվա ընթացքում գները դրամով միջին հաշվով կաճեն 9 տոկոսով: Մեկ տարի հետո դրամի գնողունակությունը 9 տոկոսով ցածր կլինի և այսօրվա 100 դրամը կարժենա 91 դրամ: Տվյալ դեպքում դոլարի ու դրամի արժեզրկումների տարբերությունը կազմող 7 տոկոսը դրամի փոխարժեքի փոփոխությունն է (էժանացումը) է դոլարի նկատմամբ:

Իսկ եթե մենք այսօր հետ ստանա՞նք մեր գումարը: Մեկ դոլարը հետ ստանալու և տարեկան 10 տոկոսով ներդնելու դեպքում տարվա վերջում կունենանք մեկ դոլար տասը ցենտ: Հաշվի առնելով նաև դոլարի 2 տոկոս արժեզրկումը, մեր տարեկան մաքուր եկամուտը կլինի 8 ցենտ մեկ դոլարից կամ 8 տոկոս: Իսկ դրամի դեպքում՞: 100 դրամը տարեկան 20 տոկոսով ներդնելու դեպքում (ինչը փաստացի ապահովում են Հայաստանի Հանրապետության պետական կարճաժամկետ պարտատոմսերը, բանկային ավանդները և այլն) մեկ տարի հետո կունենանք 120 դրամ: Դրամի 9 տոկոս արժեզրկման պատճառով տարեկան մաքուր եկամուտը կլինի 11 տոկոս: Այսինքն մեր այսօրվա ներդրված 100

դրամի արժեքը մեկ տարի հետո կլինի 111 դրամ:

Արժեզրկման ժամանակային ազդեցության քննարկումն ավարտենք հետևյալ օրինակով:
Ենթադրենք, երկու ընկերներից ավագը թոշակի է գնալու 5 տարի, իսկ կրտսերը՝ 10 տարի հետո:
Նրանցից յուրաքանչյուրը, թոշակի գնալու համար, «հետ է գցել» և ուզում է մինչև թոշակի գնալը տանը միաժամանակ պահել 1,000 դոլար և 550 հազար դրամ: Ի՞նչ կարծենան նրանցից յուրաքանչյուրի 1,000 դոլարն ու 550 հազար դրամը թոշակի գնալու ժամանակ, եթե այդ տարիների ընթացքում դոլարի արժեզրկումը կազմել է տարեկան միջինը 2 տոկոս, իսկ դրամինը՝ տարեկան միջինը 10 տոկոս: Ավագ ընկերը թոշակի գնալիս կսպարզի, որ իր պահած 1000 դոլարն այժմ ունի 5 տարի առաջվա 904 դոլարի «ուժը», իսկ 550 հազար դրամը՝ 325 հազար դրամի «ուժը»: Կրտսեր ընկերը, եթե հետևություն չանի և շարունակի գումարները տանը պահել, ապա թոշակի գնալիս կսպարզի, որ 10 տարի առաջ իր պահած 1,000 դոլարն այժմ ունի նախկին 817 դոլարի «ուժը», իսկ 550 հազար դրամը՝ նախկին 192 հազար դրամի «ուժը»:

Նախքան շարունակելը, եկեք ձևակերպենք փողի արժեզրկմանը և ժամանակային արժեքին առնչվող մի քանի գործնական հետևություններ.

- *Խնայված ու տնտեսված գումարները չի կարելի առանց աշխատեցնելու պահել տանը կամ քարցնել որևէ այլ տեղում:*
- *Առանց աշխատեցնելու պահվող գումարները արժեզրկման պատճառով պակասում են:*
- *Ինչքան մեծ է արժեզրկումը կամ նրա ազդեցության տևողությունը, այնքան ավելի անողոր են քայքայվում չաշխատող գումարները:*
- *Ժամանակն ու արժեզրկումը միմյանց հետ դաշնակցում են որպես չաշխատող գումարների հիմնական թշնամիներ:*
- *Արժեզրկումից խուսափելու և «փողն աճեցնելու» համար տնտեսված գումարը պետք է «աշխատեցնել»:*

Բաղադրյալ տոկոսների «հրաշքը»

Փողի աշխատանքի արդյունավետության հիմնական ընդհանրացված չափանիշները եկամուտը, շահույթը և դրանց տոկոսներն են (համապատասխանաբար՝ եկամտաբերություն և շահութաբերություն (շահատոկոս, տոկոս)), անկախ աշխատանքի կամ ներդրման եղանակից: Այս չափանիշների իմաստը պարզաբանենք հետևյալ օրինակի օգնությամբ: Ենթադրենք արժեթղթերում ներդրած 1,000 դրամը մեկ տարվա «աշխատանքի» արդյունքում դարձել է 1,200 դրամ: Այս օրինակում մեր ընդհանուր եկամուտը 1,200 դրամն է, իսկ շահույթը կամ շահը՝ 200դրամը:

Այսքանը բոլորս գիտենք և ձգտում ենք որևէ պատահական կարճաժամկետ ներդրում կատարելու դեպքում ներդրումների դիմաց ստացվող շահույթն առավելագույնի հասցնել: Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, բոլորիս այս կամ այն չափով հայտնի մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, մեզանից շատ քչերն են երկարաժամկետ ներդրումներ կատարում: Այդ պատճառների շարքում ամենակարևորներից մեկն այն է, որ մեզանից շատերը լսել են, սակայն հստակ չգիտեն, թե ի՞նչ է բարդ, բաղադրյալ կամ կուտակվող տոկոսը և ի՞նչ հրաշքեր է այն գործում երկարաժամկետ ներդրումների դեպքում: Շատերը կարծում են, որ եթե, ենթադրենք, 1,000 դրամ 10 տարով ներդնեն տարեկան 18 տոկոս շահութաբերություն ապահովող արժեթղթերում, ապա ամեն տարի կստանան 180 դրամ շահույթ, և 10 տարվա շահույթը կլինի ընդամենը 1,800դրամ: Այսպես մտածելով, շատերս խուսափում ենք երկարաժամկետ ներդրումներից, հուսալով, որ այդ ընթացքում հավանաբար ավելի շահութաբեր կարճաժամկետ ներդրումների հնարավորություններ կլինեն:

Այս սխալ պատկերացմանը վերջ տալու համար ժամանակն է, որ բացահայտենք բարդ, բաղադրյալ, հավելյալ կամ կուտակվող տոկոսների «հրաշքը»: **Ալբերտ Էյնշտեյնն ասել է՝ «Բաղադրյալ տոկոսները մարդկության ամենամեծ հայտնագործությունն են, քանի որ թույլ են տալիս հուսալիորեն և**

սիստեմատիկորեն հարստություն կուտակել»: Իրականում, այս «հրաշքի» էությունը շատ պարզ է և կայանում է նրանում, որ ներդրման յուրաքանչյուր ժամանակահատվածի (մասնավորապես, ամսվա կամ տարվա) վերջում առաջացած շահույթն ինքը՝ ներդրված մայր գումարի հետ միասին, հաջորդ փուլում ներդրողին լրացուցիչ շահույթ է բերում:

Երբ տարեկան 10 տոկոսով ներդնում ենք 100 դրամ, ապա առաջին տարվա վերջին այդ գումարը կկազմի 110 դրամ: Երկրորդ տարվա վերջում կունենանք ոչ թե 120, այլ 121 դրամ: Այդ 1 դրամը բաղադրյալ տոկոսն է կամ տոկոսի վրա եկած եկամուտը:

Շատերը կասեն, որ սա մեր իմացած տոկոսի տոկոսն է: Իրոք, սա մեր լսած, իմացած, բայց չօգտագործած տոկոսի տոկոսն է:

Եթե այն օգտագործեինք, ապա նախորդ օրինակում տարեկան 18 տոկոսով ներդրված 1000 դրամը 10 տարի հետո կդառնար ոչ թե 2,800, այլ 5,234 դրամ: Այսինքն, ներդրման միջին տարեկան շահութաբերությունը կկազմեր ոչ թե 18, այլ 42.3 տոկոս: 20 տարի հետո մեր ներդրած գումարը կլիներ ոչ թե 4,600 (1,000+20x180) կամ 9,468 (1,000+2x4,234), այլ 27,393 դրամ, իսկ միջին տարեկան շահութաբերությունը կկազմեր անհավատալի 264 տոկոս:

Դիտարկված օրինակից անգամ երևում է, որ փողի աշխատելու և ներդրումների դեպքում ժամանակը դառնում է մեր դաշնակիցը և տարիների ընթացքում մեր եկամուտները «սկսում են աճել սնկերի պես»: Եթե մենք երկարացնենք ներդրման ժամկետները կամ բարձրացնենք տոկոսադրույքը, ապա մեր արդյունքները կաճեն երկրաչափական պրոգրեսիայով: Ստորև բերված աղյուսակում ցույց է տրվում, թե ներդրված յուրաքանչյուր 100 դրամը որքան է դառնում՝ ներդրման տարբեր տոկոսների ու տարիների դեպքերում:

Հիմա երևի չենք զարմանա, եթե իմանանք, որ ինչ-որ մեկը ներդրումների շնորհիվ կրկնապատկել է իր գումարը 6 կամ 12 տարվա ընթացքում: Դրա համար բաղադրյալ տոկոսների մասին հիշելուց

Ներդրման տևողությունը	Ներդրման արդյունքում ստացված ընդհանուր եկամուտը ներդրման տարբեր տոկոսների դեպքում (դրամ)			
	5 տոկոս	10 տոկոս	15 տոկոս	20 տոկոս
5	128	161	201	249
10	163	259	405	619
15	208	418	814	1,541
20	265	673	1,637	3,834
25	339	1,083	3,292	9,540
35	552	2,810	13,318	59,067
45	899	7,298	53,877	365,726
55	1,147	11,739	108,366	910,044

բացի, պետք է իմանալ նաև «72-ի կանոնը»: Այն ցույց է տալիս, թե քանի՞ տարվա ընթացքում է մեր փողը կրկնապատկվում տարբեր տոկոսների դեպքում: Պարզապես պետք է 72-ը բաժանել մեր ներդրման տարեկան շահութաբերության վրա: Օրինակ, 12 տարվա ընթացքում գումարը կկրկնապատկվի ընդամենը 6 տոկոսի դեպքում, իսկ 12 տոկոսի դեպքում՝ գումարը կկրկնապատկվի ընդամենը 6 տարվա ընթացքում:

Կարելի է անսպառ օրինակներ բերել բաղադրյալ տոկոսների մասին: Սակայն դրանցից բխող գլխավոր հետևությունը նույնն է՝ պետք է խելամտորեն տնտեսել և հնարավորին չափ շուտ երկարաժամկետ ներդրումներ կատարել:

Բաղադրյալ տոկոսները հատկապես արդյունավետ են, երբ մենք ձեռք չտալով ներդրված գումարները, տարիների ընթացքում կանոնավոր կերպով ավելացնում ենք այն:

Եկեք վերհիշենք 10 տարի 18 տոկոսով ներդրված 1,000 դրամի օրինակը: Եթե առաջին ներդրումը կատարելուց հետո հաջորդ տարիներին ևս մենք տարեկան 18 տոկոսով ներդնեինք 1,000 ական դրամ, ապա մեր ամբողջ ներդրումը 10 տարում կկազմեր ընդամենը 10,000 դրամ, սակայն ընդհանուր գումարը կլիներ 27,755 դրամ: Այս կերպ շարունակելով և 20 տարում ներդնելով ընդամենը 20,000 դրամ, մենք կունենանք 173,000 դրամ:

Այսպիսով, մեր երազանքների և ապագայի պլանների իրականացմանը մենք, ըստ էության, կարող ենք հասնել ամենատվորական ու պարզ սկզբունքների՝ համբերության, երկարաժամկետ ներդրումների և բաղադրյալ տոկոսների օգտագործման միջոցով:

Հապաղման գինը

Հապաղումը ներդրումներ չկատարելուց հետո մեր երկրորդ կարևորագույն սխալն է: Ինչպես մենք համոզվեցինք վերևում, և ցույց է տալիս փորձը, որքան ուշ ենք սկսում որևէ նպատակի համար ներդրումներ կատարելը, այնքան ավելի թանկ է նստում մեզ վրա այդ նպատակի իրագործումը: Հնարավոր է, որ հապաղման պատճառով գալիք տարիներին մեր նպատակների իրագործման համար ծախսենք մի քանի անգամ ավելի շատ գումար, որպեսզի լրացնենք ժամանակին բաց թողածը:

Օրինակ, ենթադրենք 25ամյա Անդրանիկը ցանկանում է 60 տարեկանում թոշակի անցնելիս ունենալ 5 միլիոն դրամ: Իր նպատակին հասնելու համար նրան անհրաժեշտ կլինի տարեկան 10 տոկոսով 35 տարի շարունակ ամսական ներդնել 1310 դրամ՝ ներդնելով ընդամենը մոտ կես միլիոն դրամ: Եթե նա ներդրումները սկսի 35 տարեկանից, ապա անհրաժեշտ ամսական ներդրումները կկազմեն 3,740 դրամ, իսկ ներդրվող ընդհանուր գումարը կգերազանցի մեկ միլիոնը: Եթե նա սկսի ներդրումներ կատարել 40 տարեկան դառնալուց հետո, ապա ամսական ներդրումները կմեծանան հինգ անգամ՝ հասնելով 6,530 դրամի, իսկ ներդրվող ողջ գումարը կգերազանցի մեկ ու կես միլիոնը: **Քննարկենք մեկ օրինակ ևս:** Եթե երեխայի ծննդյան օրվանից ամեն աշխատանքային օր ծնողները տնտեսեն 100 դրամ և տարեկան 12 տոկոսով ներդնեն արժեթղթերում, ապա երեխայի 18 տարեկան դառնալիս կունենան մեկ ու կես միլիոն դրամ: Իսկ նույն տոկոսով 33 տարի ներդրումներ կատարելու դեպքում կունենան 10 միլիոն դրամ: Սա մեր պայմաններում կարծես թե նույնիսկ բավարար է, որ հանգիստ վերաբերվենք նաև կենսաթոշակի անցնելու հեռանկարին:

Եթե այս օրինակներից հետո անգամ ներդրումներ կատարելու որոշում չենք կայացրել, ապա հապաղման գործոնն ավելի ցայտուն զգալու համար եկեք դիտարկենք երկու դեռահաս ընկերուհիների օրինակը:

Հասմիկը և Լիլիթը 15 տարեկան են: Հասմիկի ծնողները նրա 15 տարեկանից սկսած տնտեսում են տարեկան 50 հազար դրամ: Դրա համար նրանք յուրաքանչյուր օր ընդամենը մեկ բաժակ սուրճ պակաս են խմում: Նրանք այդ գումարներով 10 տարի անընդհատ բաղադրյալ տոկոսների սկզբունքով ներդրումներ են կատարում արժեթղթերում՝ գնելով տարեկան 20 տոկոս եկամտաբերություն ապահովող պետական պարտատոմսեր: Իսկ Լիլիթի ծնողներն ու ինքը ոչ մի խնայողություն ու ներդրում չեն կատարում մինչև նրա 40 տարեկան դառնալը: 40 տարեկանից սկսած, զգալով ծերության շունչը, Լիլիթը 26 տարի շարունակ յուրաքանչյուր տարի հետևողականորեն տնտեսում ու ներդնում է շուրջ կես միլիոն դրամ: Երիտասարդության 10 տարիների ընթացքում ներդրված ընդամենը կես միլիոն դրամի շնորհիվ 65 տարեկանում Հասմիկը ունեցավ ավելի քան կես միլիոն դոլար: Իսկ Լիլիթը 26 տարի տքնելով և ներդնելով ընդհանուր առմամբ ավելի քան 13 միլիոն դրամ, ունեցավ Հասմիկից մոտ երկու անգամ քիչ: Ներդրումների շնորհիվ ընկերուհիներից ոչ մեկը չի ապրի ծերանոցում: Սակայն, Հասմիկի ներդրումները 50 տարիների ընթացքում աճել են Լիլիթի ներդրումներից մոտ 2 անգամ շատ, թեպետ Հասմիկից անհամեմատ ավելի քիչ ջանք է պահանջվել դրա համար:

Կորուստներ և փաստացի եկամուտներ

Արժեթղթերի միջազգային շուկաներում ներդրումների տարեկան միջին շահութաբերությունը երկար տարիների ընթացքում եղել է 10-12 տոկոսից ոչ պակաս: Ուստի, իր գումարը 12 տարվա ընթացքում կրկնապատկած մարդը փաստորեն միջին շուկայականից կրկնակի անգամ քիչ եկամուտ է ստացել: Ներդրումային գաղտնիքներից մեկը հենց այստեղ է թաքնված: Հարց է ծագում, թե ինչպե՞ս պետք է ներդրումներ կատարենք, որպեսզի մեր եկամուտը գերազանցի միջին շուկայականը:

Միջին շուկայականից ավելի մեծ եկամտաբերություն խոստացող ներդրումային հնարավորություն փնտրելուց բացի, ի՞նչ այլ հանգամանքներ ենք պարտավոր հաշվի առնել ներդրումներ կատարելիս:

Ենթադրենք, որևէ բաժնետիրական ընկերության արժեթղթերում մեր ներդրումները մեկ տարում տվել են 30 տոկոս եկամուտ: Մենք պետք է ճշտենք, թե որքա՞ն է կազմում մեր փաստացի եկամուտը:

Ամենանշանակալի գործոններից մեկը, որը մենք հակված ենք անտեսել ու շրջանցել՝ եկամուտներից վճարվելիք հարկերն են: Պետք է ներդրում կատարելուց առաջ նախ պարզել, թե ինչպե՞ս են հարկվում տարբեր արժեթղթերում կատարված ներդրումներից ստացված եկամուտները: Օրինակ, 20 տոկոս եկամտահարկի դեպքում 30 տոկոս եկամուտ ապահովող արժեթղթերից մեր փաստացի եկամուտը կկազմի 24 տոկոս: Եթե մենք գումարը ներդրած լինեինք 24 տոկոս եկամուտ ապահովող, բայց չհարկվող որևէ պետական պարտատոմսում, ապա կստանալինք նույն փաստացի եկամուտը: Ամեն դեպքում կարևորն այն է, թե փաստացի որքա՞ն գումար է մեզ մնում վերջում:

Ինչպես արդեն նշել ենք, փաստացի եկամուտների վրա ազդող մյուս գործոնը արժեզրկումն է: Տվյալ դեպքում, եթե հարկումից հետո ներդրումներից ստացված մեր եկամուտը կազում է 24 տոկոս, իսկ արժեզրկումը մեր գումարի գնողունակությունը նվազեցնում է ևս 6 տոկոսով, ապա մեր փաստացի եկամուտը դառնում է 18 տոկոս:

Այսպիսով, ճիշտ ներդրումային որոշում կայացնելու և փաստացի եկամուտները հաշվարկելու համար, մենք առաջին հերթին պետք է հստակ տեղեկատվություն ու պատկերացում ունենանք ներդրումային տարբեր գործիքներում ներդրումների միջին տարեկան տոկոսադրույքների, ներդրումների հարկման առանձնահատկությունների ու արժեզրկման ցուցանիշների մասին:

Խաղամոլություն, թե՞ ներդրում

Հնարավոր է, որ մեզանից մեկը շահել է կազինոյում, մեկ ուրիշի բախտը բերել է լոտոներից մեկում և այլն: Այսպիսի դեպքերի մասին հիշելով կամ լսելով, հավանաբար շատերս մտածում ենք, թե ի՞նչ կարիք կա փողը ներդնելու դանդաղ և անդադար գործող ինչ-որ ներդրումային գործիքներում: Չէ՞ որ դրանք տարիների ընթացքում խոստանում են ընդամենը երկնիչ եկամուտներ, այն դեպքում, երբ կարելի է կայծակնային արագությամբ ձեռք բերել մի ամբողջ կարողություն: Բաղադրյալ տոկոսների կուտակման եղանակն օգտագործելու դեպքում, այդ թվում նաև արժեթղթերի շուկայում, մենք պետք է տարիներով հետևենք, որ մեր ներդրած գումարները կրկնապատկվեն: Իսկ եթե մենք ցանկանում ենք մեծ գումարներ և միանգամի՞ց:

Այսպիսի մտորումների ժամանակ մենք չենք փորձում մտածել այն մասին, որ գուշակությունները, խաղամոլությունն ու բախտախնդրությունը ընդհանուր առմամբ մշտական և հարատև հաջողություն չեն ապահովում: Չենք փորձում նաև հիշել, թե ինչպես ենք մենք կամ մեր ծանոթները կորցրել մեր խնայողություններն ինչ-որ խարդախ գործարքներում, կամ ինչպիսի փորձություններով ենք անցել որոշ «վիճակախաղերից» շահած իրերը կամ գումարները ստանալու պայքարում:

Վերհիշենք, օրինակ, կեղծ «բանկերում» ներդրած ու կորցրած մեր խնայողությունները: Լուրջ ու վստահելի բանկերը թողած, պաշարել էինք ինչ-որ կասկածելի կազմակերպություններ: Հերթեր էինք կանգնում ու ծանոթներ փնտրում՝ մեր քրտինքով վստահված գումարներն ինչ որ հրաշագործների հանձնելու համար: Ինչու՞: Որովհետև, մեզ անհամեմատ բարձր եկամուտներ էին խոստանում, քան առաջարկում և ապահովում էին օրինական գործունեությամբ զբաղվող բանկերը: Գե, մենք էլ մեզ ներդրություն չէինք տալիս, լրացուցիչ անգամ պարզելու, թե ի՞նչ կազմակերպություն են այդպիսի ոսկե անձրև առաջարկող «բանկը կամ ինվեստը», ովքե՞ր են հիմնադրել, ինչու՞ են զբաղվում, ունե՞սն արդյոք համապատասխան արտոնագրեր, ի՞նչ եկամուտներ ունեն, օրինակա՞ն են արդյոք եկամտի աղբյուրները, չունե՞ն արդյոք պրոբլեմներ իշխանությունների և իրենց հաճախորդների հետ և այլն:

Իսկ ինչու՞ ներդրություն չէինք տալիս մեզ: Որովհետև չենք սիրում «դանդաղ և անդադար մեզ համար աշխատող» ներդրումներ կատարել, չենք սիրում սպասել, որ մեր եկամուտներն աճեն «կաթիլ առ կաթիլ», չենք սիրում օրինական ճանապարհով մեր իրավունքներին հետամուտ լինել և այլն: Իսկ այս ամենը չենք սիրում, որովհետև սովորաբար ձգտում ենք միայն «գոլ խփել» և չենք համակերպվում այն իրողության հետ, որ տարաբնույթ խաղերի մեծ մասը տվյալ պահին խոստանում, բայց հազվադեպ են կատարում մեր ցանկացածը:

Վերը նշվածների պատճառով, շատերս խաբված ավանդատուներ լինելուց հետո այժմ էլ դարձել ենք «լոտո ջնջողներ», գիտակցելով հանդերձ, որ խաղամոլության մեջ օգտագործվող յուրաքանչյուր դրամը հենց այն դրամն է, որն այլևս երկարատև ժամանակամիջոցում հետևողականորեն չի «աշխատելու» և լրացուցիչ եկամուտներ չի բերելու մեզ:

Տխուր հիշողությունները շարունակելու փոխարեն եկեք համեմատենք մեր տնտեսած գումարներն «աշխատեցնելու» այս այլընտրանքային հնարավորությունները: Նախ, ճշտենք, թե ինչպիսի՞ն են կազինոյում, վիճակախաղում կամ լոտոյում շահելու հնարավորությունը: Առավելագույնը, որ կարող

ենք ասել, այն է, որ դա կախված է մի շարք պայմաններից և կարող է լինել, ասենք, մեկը հազարի, 10 հազարի, 100 հազարի կամ միլիոնի մեջ: Իսկ, թե հավաքագրված գումարների ո՞ր մասն է յուրաքանչյուր դեպքում խաղարկվում, երևի գիտեն խաղացողներից եզակիները: Այժմ եկեք պարզապես հաշվենք, թե ինչքա՞ն գումար ենք յուրաքանչյուրս ծախսել տարաբնույթ լոտոների, վիճակախաղերի և այլ «հրաշքների» վրա: Եվ ինչքա՞ն լրացուցիչ գումար կունենալինք հիմա, եթե այդ գումարները շրջահայացորեն տնտեսած և ներդրած լինեինք թեկուզ ամսական ընդամենը 2-2.5 տոկոսով: Ի տարբերություն խաղամոլության, շրջահայացորեն կատարված ներդրումները, համբերությունն ու հետևողական աշխատանքը որոշակի ժամանակի ընթացքում սովորաբար ապահովում են մեր նպատակների իրականացումը:

Ըստ էության, արժեթղթերի շուկայում ևս կարելի է «խաղամոլությամբ» զբաղվել և ապշեցուցիչ հաջողությամբ երբեմն հսկայական կարողություն շահել կամ կորցնել ներդրված գումարները: Անհայտ արժեթղթերը վիճակախաղերի ու լոտոների նման ռիսկային են: Ներդրում կատարելով այնպիսի արժեթղթերում, որոնցից ոչինչ չենք հասկանում կամ որոնց շուկայական գների ու թողարկողների վերաբերյալ բավարար տեղեկություն չունենք, մենք փաստորեն խաղամոլությամբ ենք զբաղվում:

Ենթադրենք, մենք պատահաբար լսում ենք, որ «Հրաշք Հայք» կոչվող ինչ որ ընկերություն «մի քանի ամիս հետո անցնելու է բոլորից»: Եթե դրանից հետո անմիջապես գնենք այդ ընկերության բաժնետոմսերից, ապա մեր արարքը կլինի խաղամոլություն: Մենք պատկերացում ունեի՞նք, թե ինչ էր իրենից ներկայացնում այդ «Հրաշք Հայք» ընկերությունը: Տեղյա՞կ էինք նրա մրցակիցների մասին: Հետաքրքրվե՞լ ենք, թե որքան են եղել նրա եկամուտներն անցյալ տարում կամ եռամսյակում: Ստուգե՞լ ենք մեր գնած բաժնետոմսերի գների տատանումներն արժեթղթերի շուկայում: Ի վերջո, գիտեի՞նք արդյոք, ընդհանրապես, թե ի՞նչ է արժեթուղթը կամ արժեթղթերի շուկան: Ինչո՞վ են տարբերվում միմյանցից, ենթադրենք, բաժնետոմսն ու պարտատոմսը, ինչպե՞ս են նրանք մեզ համար «փող աշխատում» և այլն: Նախքան ներդրում կատարելը մենք պետք է պարզենք տվյալ ընկերությանն ու արժեթղթերի շուկային առնչվող այս և մի շարք այլ հարցերի պատասխաններ: Հակառակ դեպքում, հենց այնպես որևէ «հրաշք» ընկերության արժեթղթեր գնելիս, մենք դառնում ենք սովորական խաղամոլ: Այսպիսի դեպքերում, անհաջողության մատնվելիս, բոլորովին չպետք է զայրանանք, որ կորցրել ենք մեր ներդրած գումարները:

Արժեթղթերի շուկայում կարելի է երկարաժամկետ ներդրումների միջոցով նաև զբաղվել ապագայի բարեկեցության ապահովմանն ուղղված համբերատար և հետևողական աշխատանքով: Հանդգնվելու համար դիտարկենք արժեթղթերի առավել տարածված տեսակների եկամտաբերության որոշ վիճակագրական տվյալներ: Մեր երկրի արժեթղթերի շուկայի թերզարգացվածության և պատմական փորձի սահմանափակության պատճառով կրեթենք վիճակագրական տվյալներ նաև այլ երկրների, մասնավորապես, Միացյալ Նահանգների, փորձից:

Կարճաժամկետ պարտատոմսերում (մասնավորապես, ԱՄՆ գանձապետական պարտատոմսեր և կարճաժամկետ պարտատոմսերում ներդրումներ կատարող ներդրումային հիմնադրամների թողարկած արժեթղթեր) ներդրումները նախորդ հարյուրամյակի ընթացքում ապահովել են մոտավորապես 4.2 տոկոս տարեկան միջին եկամուտ: Մեր երկրում ձևավորված եկամտաբերության չափանիշների համեմատ դա այնքան էլ չատ չի թվում: Մակայն, մինչև նախորդ հարյուրամյակի 60-ականներն ԱՄՆ-ում արժեգրվում համարյա գոյություն չունեին, և տարեկան 4.2 տոկոս եկամուտն ընդունելի էր շատերի համար: Նույն ժամանակահատվածում երկարաժամկետ պետական պարտատոմսերն ԱՄՆ-ում տարեկան ընդամենը 4.0 տոկոս եկամուտ են ապահովել, ինչն իրոք բարձր ցուցանիշ է: Անցած դարում ԱՄՆ-ում պարտատոմսերի համար լավագույնը 80-ականներն են եղել՝ 13.81 տոկոս միջին տարեկան եկամուտ: Իսկ վատթարագույնը եղել են 50-ականները՝ տարեկան 3.75 տոկոսի կորուստ: Ընդհանուր առմամբ, եթե 1900 թվականին ԱՄՆ երկարաժամկետ պարտատոմսերում ներդրած լինեինք 1 դոլար, ապա այսօր կունենալինք մոտավորապես 50 անգամ ավել:

Բաժնետոմսերը պարտատոմսերի համեմատ ավելի բարձր եկամտաբերություն են ապահովում: Նախորդ հարյուրամյակում բաժնետոմսերի միջին տարեկան եկամտաբերությունն ԱՄՆ-ում կազմել է 9.8 տոկոս, սակայն 1900-ականներին նվազել է մինչև տարեկան 0.17 տոկոս: 1950-ականներին միջին եկամտաբերությունը կազմել է տարեկան 18.23 տոկոս, 1980-ականներին՝ 16.64 տոկոս և 1990-ականներին՝ 17.3 տոկոս: Ի վերջո, եթե ԱՄՆ բաժնետոմսերում 1900 թվականին ներդրած լինեինք 1 դոլար, ապա այսօր կունենալինք

Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայի հիմնական

ընդհանրացված ցուցանիշներ										
Ցուցանիշներ	1996	1997	1998	1999	2000	2001				
						Հնվ.	Փտր.	Մրտ.	Սպտ. Մայիս	
- ՊԿՊ եկամտաբերություն										
- Վարկային տոկոսադրույք	45	54	45	54	26	26	22	24	25	22
- Ավանդային տոկոսադրույք	61/49	53/49	49/44	37/36	29	24	29	25	33	33
- Դրամ-դոլլար փոխարժեք	38/29	33/25	30/25	26/23	20	19	18	18	20	21
	414	492	502	534	555	553	553	546	548	552

Փողի հավելանք և տոկոսը

Ընդհանուր առմամբ, բոլորս երևի գիտենք, որ գոյություն ունեն փող աշխատելու հետևյալ երկու հիմնական եղանակները.

- **Մենք աշխատում ենք վաստակելու կամ «փող աշխատելու» համար:** Այս դեպքում ինչ-որ մեկը վճարում է, որ մենք աշխատենք իր համար, կամ մենք ունենք մեր սեփական գործը և աշխատում ենք մեզ համար:
- **Մեր փողն է «աշխատում» մեզ համար:** Այս դեպքում մենք տնտեսում ենք մեր վաստակը և խնայողություններ կամ ներդրումներ կատարում:

Խնայողություններն ու ներդրումներն իրենց հերթին, ընդհանուր առմամբ, կարող են մեզ համար աշխատել հետևյալ երկու եղանակներով.

- **Ներդրվելիք գումարը պարտք ենք տալիս,** որպեսզի հավելյալ գումար կամ «տոկոս» ստանանք: Այս հարաբերություններն են ծագում նաև մեր և որևէ ընկերության կամ պետության միջև, երբ մենք գնում ենք նրանց թողարկած պարտատոմսերը: Իրենց բաժնետերերին պարբերաբար շահաբաժիններ վճարող ընկերությունների բաժնետոմսերը գնելու դեպքում ևս մենք կանոնավոր կերպով կստանանք այդ ընկերության շահույթի մեր մասը:
- **Ներդրվելիք գումարով գնում ենք որևէ ապրանք,** հուսալով, որ ժամանակի ընթացքում կաճի այդ ապրանքի գինը: Կանխիկ գումարի կարիքի դեպքում մենք այդ ապրանքը վաճառում ենք, հուսալով, որ ինչ-որ մեկը մեր վճարածից ավելի բարձր գնով կգնի այն: Նույն կերպ, որևէ ընկերության բաժնետոմս գնելիս, մեր բաժնեմասի չափով մենք դառնում ենք այդ ընկերության սեփականատեր: Ընկերության շահութաբեր աշխատանքի դեպքում մեծանում են այդ ընկերության կապիտալն ու ներդրողների հետաքրքրությունը նրա բաժնետոմսերի նկատմամբ: Եթե մենք և մյուս բաժնետերերը կամ սեփականատերերը միասին որոշենք այդ ընկերության շահույթից շահաբաժին չստանալ, ապա դա չի նշանակում, որ մեր փողը չի աշխատել մեզ համար: Այդ դեպքում արժեթղթերի շուկայում կաճի այդ ընկերության բաժնետոմսերի գինը, և մեր վճարածից ավելի թանկ գնով տվյալ բաժնետոմսը վաճառելու դեպքում մենք կստանանք մեր ներդրած փողի «մեծացած արժեքը» կամ հավելանք:

Շատ հաճախ արժեթղթերում ներդրած մեր գումարները կարող են միաժամանակ և «տոկոս բերել», և աճել իրենց արժեքով: Մասնավորապես, մեր ներդրած գումարն այսպես է աշխատում, երբ մեր գնած բաժնետոմսից մենք ստանում ենք շահաբաժիններ, իսկ հետո այն վաճառում ենք մեր վճարածից ավելի թանկ գնով:

Ռիսկ և եկամուտ

Ինչպես արդեն հիշատակել ենք, սովորաբար խնայողություն համարվում է մեր տնտեսած գումարի այն մասը, որը տեղաբաշխում ենք ամենաապահով և իրացվելի ներդրումային գործիքներում կամ գնում ենք այնպիսի ապրանքներ, որոնք կարող ենք ցանկացած ժամանակ վաճառել և հետ ստանալ մեր գումարը: Ընդհանուր առմամբ այդպիսի հնարավորություն մեզ ընձեռնում են բանկային ավանդները, բանկային հաշիվները, ավանդային հավաստագրերը, պետական կարճաժամկետ պարտատոմսերը և այլն: Որպես օրինակափոխություն, ապահովության և ցանկացած պահին առանց զգալի կորուստների կանխիկ գումարի վերածվելու պահանջներին բավարարելու դեպքում «աշխատող փողն» ավելի քիչ եկամուտ է բերում: Շրջահայաց ներդրողներից շատերը, եկամտաբերության անհրաժեշտ կանխիկ գումարն առանց կորուստների անմիջապես ունենալու նպատակով բավականաչափ ներդրումներ են կատարում խնայողության գործիքներում:

Սակայն, ներդրումների ապահովությանը մենք պարտավոր ենք մոտենալ մաս նրանց փաստացի եկամտաբերության տեսանկյունից: Մասնավորապես, ապահով է արդյոք, եթե մեր ամբողջ գումարը երկար ժամանակով ներդրված է մի խնայողության գործիքում, որի եկամտաբերությունը կարող է երբեմն նույնիսկ արժեզրկումից ավելի ցածր լինել: Օրինակ, երբ մի հաց գնելու փոխարեն 100 դրամ ենք տնտեսում և տարիներ անց այդ 100 դրամն ու դրա տոկոսները խնայիաշվից հանելիս պարզում ենք, որ կարող ենք գնել միայն կես հաց:

Վերը նշվածի պատճառով, նույնիսկ ապահովության ձգտող անձիք չեն անտեսում մաս վերադարձելիության առումով ավելի ռիսկային, սակայն ավելի շատ վաստակելու հնարավորություն տվող ներդրումները: Ինչպես մենք համոզվեցինք մաս բաղադրյալ տոկոսների ուսումնասիրման ժամանակ, խնայողությունների համեմատ ավելի ռիսկային ներդրումների առավելություններն ակնհայտ են դառնում երկարաժամկետ ներդրումների դեպքում, երբ եկամուտները կուտակվում ու հավելյալ եկամուտ են բերում մեզ: Ընդհանուր առմամբ, ներդրումների դեպքում մեծանում է մեր ներդրած մայր գումարը կամ դրա մի մասը կորցնելու հավանականությունը կամ ռիսկը: Սակայն, միևնույն ժամանակ, մենք խնայողությունների համեմատ ավելի շատ վաստակելու հնարավորություն ենք ստանում:

Շատերն իրենց գումարը կամ եկամուտները ներդրումային ռիսկերից պաշտպանում են ներդրումները բաշխելով կամ տարալուծելով տարբեր ներդրումային գործիքներում: Այսպես վարվելիս մենք հույս ունենք, որ որոշ ներդրումներից մեր կրած կորուստները կփոխհատուցվեն այլ ներդրումներից առաջացող եկամուտների շնորհիվ: Խնայողությունների և ներդրումների նպատակով գումար տնտեսելուց հետո պետք է խնամքով դիտարկել մատչելի բոլոր տարբերակները և մտածել, թե ո՞ր ներդրումներն ու դրանց գույքորոշումներն են առավել համապատասխանում մեր ներդրումային նպատակներին, եկամտաբերության ապաստիքներին ու ռիսկի դիմագրավման հնարավորություններին:

Ոչ ոք չի կարող աներկբա խորհուրդ տալ որևէ որոշակի ներդրումային գործիքում ներդրում կատարելու վերաբերյալ: Գոյություն ունի ներդրումային գործիքների լայն տեսականի, ներառյալ բաժնետոմսերը, կորպորատիվ և պետական պարտատոմսերը, ավանդային հավաստագրերը, բանկային հաշիվները և այլն: Եվ նույնիսկ ներդրումների տարալուծումը չի երաշխավորում, որ մեր ներդրումները չեն տուժի, եթե շուկայում գների համատարած անկում լինի: Սակայն այդ տարալուծումը կարող է օգնել մեզ հավասարակշռել տարբեր գործիքներում ներդրումների հնարավոր ռիսկերն ու եկամուտները:

Ընդհանրապես, ցանկացած բնագավառում, այդ թվում մաս արժեթղթերում, ներդրումներ կատարելիս պետք է հիշել, որ որքան բարձր է ապավող շահույթը, այնքան բարձր է մաս կորուստների հնարավորությունը կամ ռիսկը: Ներդրումների իրական աշխարհը ճանաչելու առումով կարևոր է հստակ պատկերացնել և միայնացից տարբերել ռիսկերի հիմնական տեսակները, մասնավորապես.

- **Արժեզրկման ռիսկը** պայմանավորված է մեր ներդրումների ու խնայողությունների գնողունակության անկման հնարավորությամբ:
- **Վարկային ռիսկը** պայմանավորված է թողարկողի կողմից ներդրողների նկատմամբ ստանձնած

պարտավորությունները կատարելու և պարտք վերցված գումարները վերադարձնելու կարողության կորստի հնարավորությամբ:

- **Տոկոսային ռիսկը** պայմանավորված է շուկայում տոկոսադրույքների աճի ժամանակ մեր ներդրումների շուկայական արժեքի անկման հնարավորությամբ:
- **Իրացվելիության ռիսկը** պայմանավորված է մեր ներդրումներն առանց ժամանակի էական կորստի, ընթացիկ շուկայական գնով կանխիկ գումարի փոխարկելու հնարավորության սահմանափակմամբ:
- **Շուկայական ռիսկը** պայմանավորված է քաղաքական և տնտեսական պայմաններից կամ ընկերության գործունեությունից կախված արժեթղթերի շուկայում գների տատանումներով:
- **Արժեթղթերի շուկայի համակարգային ռիսկերը** պայմանավորված են տեղեկատվության և հրապարակայնության խախտումներով, գնագոյացման մեխանիզմների անկատարությամբ, պարտավորությունների կատարման ձգձգումներով և այլն:

Մի խոսքով, անհրաժեշտ է հստակ պատկերացնել ներդրումների և տարբեր արժեթղթերի հետ կապված բոլոր ռիսկերը, որպեսզի կարողանանք գնահատել դրանց դիմակայելու մեր պատրաստակամությունն ու հնարավորությունները և փորձենք հավասարակշռել դրանք ներդրումներից ակնկալվող եկամուտների հետ:

Հետաքրքրվելով, թե որո՞նք են ամենալավ ներդրումները, ի վերջո համոզվում ենք, որ գոյություն չունի որոշակի ճիշտ պատասխան: Պատասխանը կախված է յուրաքանչյուր ներդրողի ապագայի պլաններից ու ներդրումային նպատակներից, կանխիկ գումարի ընթացիկ կարիքից, ներդրումային հնարավորություններից, ներդրումներին հատկացվող ժամանակից, ներդրումների վերաբերյալ ունեցած գիտելիքներից, տեղեկատվությունից օգտվելու հնարավորություններից և այլն: Ի վերջո, պատասխանը կախված է նրանից, թե կկարողանա՞նք գիշերը քնել, եթե գնենք ռիսկային արժեթուղթ, որի հետևանքով կարող ենք կորցնել մեր ողջ գումարը:

Բաժնետոմսեր և պարտատոմսեր

Մենք արդեն գիտենք, որ արժեթղթերի շուկայում հիմնական ներդրումային գործիքները պարտատոմսերն ու բաժնետոմսերն են: Դրանք գնելով մենք համապատասխանաբար դառնում ենք տվյալ արժեթուղթը թողարկող կազմակերպության պարտատերը կամ սեփականատերը: Արժեթղթերում ներդրումներ կատարելիս, մեր ներդրումային նպատակներից ու հնարավորություններից կախված, սովորաբար հարկ է լինում ընտրել այս ներդրումային գործիքներից որևէ մեկը կամ դրանց որոշակի գույքորոշումները: Մանրամասներից և մասնագիտական ձևակերպումներից խուսափելով, փորձենք հստակեցնել բաժնետոմսերի և պարտատոմսերի հիմնական ներդրումային առանձնահատկությունները:

Ենթադրենք, մենք հավատում ենք, որ գարեջուր արտադրող ընկերությունում ներդրում կատարելն արդյունավետ ներդրում է: Մեր ծանոթները հաճույքով գնում են այդ ընկերության արտադրած գարեջուրը: Ավելին, մեր ընկերները մեզ տեղեկացնում են, որ ընկերության արտադրանքը պարբերաբար մրցանակներ է ստանում միջազգային տոնավաճառներում և ընկերությունը նախատեսում է ընդլայնել արտահանումը: Ներդրումային հետաքրքրություն առաջանալուց հետո, մենք ինքներս լրացուցիչ պարզում ենք ընկերության վիճակը կամ օգտվում ենք մասնագետի ծառայությունից, որն ուսումնասիրում է ընկերության վերաբերյալ առկա բոլոր նյութերը և մեզ ներկայացնում իր կարծիքը: Ուսումնասիրություններից հետո մենք համոզվում ենք, որ դա կայուն ընկերություն է և դեռ երկար տարիներ կշարունակի իր գործունեությունը:

Ընկերությունը թողարկել է ինչպես բաժնետոմսեր, այնպես էլ պարտատոմսեր: Պարտատոմսերը ընկերության կողմից հետ են գնվելու (մարվելու) 3 տարի հետո, և մարման ժամանակ ընկերությունը մեզ վճարելու է մեր նախնական ներդրումը: Պարտատոմսով նախատեսված է նաև վճարել 16 տոկոս տարեկան եկամուտ, որն ընկերության կողմից իրականացվելու է տարեկան երկու անգամ՝ 8 ական տոկոսով: Ընկերությունը չունի բաժնետոմսերը մարելու և մեր նախնական ներդրումը վերադարձնելու պարտավորություն: Բաժնետոմս գնելու դեպքում մենք լրացուցիչ ռիսկի ենք դիմում, քանի որ ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման կամ բաժնետոմսերի շուկայական գների

անկման դեպքում հնարավոր է, որ կորցնենք մեր ներդրած գումարը կամ դրա մի մասը: Մակայն, հնարավոր է նաև բաժնետոմսերի գների այնպիսի աճ, որը կգերազանցի պարտատոմսերից ստացվող եկամուտը: Բաժնետոմս գնելու դեպքում մենք դառնում ենք ընկերության սեփականատերերից մեկը և ընկերության գործերը լավ գնալու դեպքում ավելի մեծ եկամուտ ստանալու հնարավորություն ենք ստանում:

Մենք երկմտում ենք, թե ի՞նչ որոշում կայացնել: Մենք կարծում ենք, որ ընկերությունը կարող է կատարել պարտատոմսերի թողարկման հետ կապված իր պարտավորությունները, քանի որ արդեն հաջողությամբ գործում է մի քանի տարի և հիմքեր չկան մտածելու, որ այն կսնանկանա: Ուստի, եթե պարտատոմս ենք գնում, ապա հետ ենք ստանում մեր գումարը և տարեկան լրացուցիչ 16 տոկոս եկամուտը: Մյուս կողմից, գիտենք նաև, որ ընկերության բաժնետոմսերի արժեքը ֆոնդային բորսայում աճում է տարեկան 14-17 տոկոսով, և, որպես կանոն, ընկերությունն իր շահույթից բաժնետերերին վճարում է 6-7 տոկոս շահաբաժին: Եթե այսպես շարունակվի, ապա բաժնետոմս գնելու դեպքում մեր տարեկան եկամուտը 16-ի փոխարեն կարող է հասնել մինչև 24 տոկոսի:

Միայն ժամանակը ցույց կտա, թե ո՞րն էր ճիշտ ընտրությունը: Եթե գնենք բաժնետոմսեր, ապա պետք է մշտապես հետևենք ընկերության գործունեությանն ու բաժնետոմսերի շուկայական գներին: Բաժնետոմսերը կարող ենք պահել այնքան ժամանակ, քանի դեռ ընկերությունը հաջողությամբ վճարում է իր գարեջուրը և բաժնետոմսերի գները չեն նվազում: Պարտատոմս գնելու դեպքում կարող ենք ավելի հանգիստ լինել ու հազվադեպ հետևել ընկերության կամ արժեթղթերի շուկայի վիճակին, սակայն այս դեպքում ավելի քիչ եկամուտ կստանաք: Իսկ միգուցե երկուսից էլ գնե՞մք: Որոշում կայացնելուց առաջ եկեք ամփոփենք պարտատոմսերի և բաժնետոմսերի հիմնական առանձնահատկությունները.

- *Պարտատոմսերի դեպքում մենք որոշակի տոկոսով և ժամկետով պարտք ենք տալիս: Ընկերությունը պարտավորվում է վերադարձնել ներդրված գումարն ու պարտատոմսերի թողարկման պայմաններով նախատեսված տոկոսները: Սնանկացման կամ լուծարման դեպքում նախքան բաժնետերերի նկատմամբ իր պարտավորությունները կատարելը ընկերությունը պարտավոր է վճարել իր պարտքերը պարտատոմսերի սեփականատերերին:*
- *Բաժնետոմսերի դեպքում մենք դառնում ենք ընկերության համասեփականատեր և իրավունք ստանում մասնակցել նրա կառավարմանը: Ընկերության շահութաբեր աշխատանքի դեպքում, պարտքերի վճարումից հետո մենք կարող ենք նաև շահաբաժիններ ստանալ: Ընկերության լավ աշխատանքի դեպքում մեր բաժնետոմսերի գինը ևս կարող է աճել արժեթղթերի շուկայում: Մենք կարող ենք ավելի մեծ եկամուտ ստանալ, քան պարտատոմսերից: Մակայն, եթե ընկերությունը վնասներ կրի, սնանկանա կամ լուծարվի, ապա ներդրումները մասնակի կամ ամբողջովին կորցնելու ավելի մեծ ռիսկի ենք ենթարկվում:*

Ինչևէ, մենք որոշում կայացնելու ժամանակ դեռևս ունենք և մտածում ենք, թե միգուցե մրցակից ընկերության արժեթղթեր է՞լ գնենք: Իսկ ի՞նչն է խանգարում հետաքրքրվել նաև այլ ոլորտներում հաջողությամբ գործող ընկերությունների արժեթղթերով:

Իրոք, ներդրումային գործիքների ընտրությունից ոչ պակաս կարևոր է մեր ներդրումային կարիքներին համապատասխանող ընկերությունների կամ ոլորտների ճիշտ ընտրությունը: Տարբեր ընկերությունների արժեթղթերի միջև ընտրություն կատարելիս մենք պետք է գիտակցենք, որ ցանկացած ընկերության արժեթղթերում ներդրում կատարելով մենք կարող ենք փող աշխատել կամ, ընդհակառակը, կորցնել մեր գումարները:

Որևէ ընկերության արժեթղթեր գնելով մենք կարող ենք փող աշխատել, եթե.

- *Ընկերության գործունեությունն իր մրցակիցներից ավելի արդյունավետ է:*
- *Այլ ներդրողները ևս համոզված են դրանում: Ուստի, մեր ունեցած արժեթղթերը վաճառելու ժամանակ կլինեն դրանք գնել ցանկացողներ:*
- *Ընկերությունը շահութաբեր է և կարողանում է վճարել մեր պարտատոմսերի տոկոսները և բաժնետոմսերի շահաբաժինները:*
- *Ընկերության ղեկավարներն ազնիվ, աշխատասեր և գործիմաց մարդիկ են:*

- *Ընկերության արժեքները մշտական պահանջարկ ունեն ներդրողների կողմից, և արժեքների շուկայում գների տարօրինակ ու անհասկանալի անկումներ չեն նկատվում:*
- *Ընկերությունը հետևում է կորպորատիվ կառավարման սկզբունքներին, պարբերաբար տեղեկատվություն է հրապարակում իր գործունեության արդյունքների վերաբերյալ և այլն:*

Մենք, ընդհակառակը, որևէ ընկերության արժեքներ գնելով, կարող ենք կորցնել մեր գումարները, եթե.

- *Տվյալ ընկերության մրցակիցներն ավելի արդյունավետ են աշխատում:*
- *Սպառողները չեն ցանկանում գնել ընկերության արտադրանքը:*
- *Ղեկավարները արդյունավետ չեն կառավարում ընկերությունը, ազնիվ չեն, շատ են ծախսում, ծախսերը գերազանցում են եկամուտները:*
- *Հնարավոր ներդրողները չեն ցանկանում մեր վճարած գնով գնել այդ ընկերության թողարկած արժեքները:*
- *Ընկերության ղեկավարները թյուր տեղեկատվություն են տրամադրում ընկերության գործունեության վերաբերյալ, խոսում են գոյություն չունեցող շահույթների ու սլայմանագրերի մասին և նույնիսկ կեղծում են ֆինանսական տվյալները:*
- *Բրոքերները զբաղվում են ընկերության արժեքների գնի մանիպուլյացիայով, որի հետևանքով սխալ կարծիք է ստեղծվում դրանց գնի մասին: Արհեստականորեն գինը բարձրացնելուց հետո նույն բրոքերները վաճառում են այդ արժեքները, որից հետո դրանց գինն ընկնում է, և ներդրողները կորցնում են իրենց գումարները:*
- *Այլ պատճառներ, որոնք մեզ դրդում են վաճառել տվյալ ընկերության արժեքները շուկայում դրանց գների անկման ժամանակ:*

Ինչևէ, մենք որոշում կայացնելու ժամանակ դեռևս ունենք և մտածում ենք, թե միգուցե մրցակից ընկերության արժեքներ է՞լ գնենք: Իսկ ի՞նչն է խանգարում հետաքրքրվել նաև այլ ոլորտներում հաջողությամբ գործող ընկերությունների արժեքներով:

Իրոք, ներդրումային գործիքների ընտրությունից ոչ պակաս կարևոր է մեր ներդրումային կարիքներին համապատասխանող ընկերությունների կամ ոլորտների ճիշտ ընտրությունը: Տարբեր ընկերությունների արժեքների միջև ընտրություն կատարելիս մենք պետք է գիտակցենք, որ ցանկացած ընկերության արժեքներում ներդրում կատարելով մենք կարող ենք փող աշխատել կամ, ընդհակառակը, կորցնել մեր գումարները:

Որևէ ընկերության արժեքներ գնելով մենք կարող ենք փող աշխատել, եթե.

- *Ընկերության գործունեությունն իր մրցակիցներից ավելի արդյունավետ է:*
- *Այլ ներդրողները ևս համոզված են դրանում: Ուստի, մեր ունեցած արժեքները վաճառելու ժամանակ կլինեն դրանք գնել ցանկացողներ:*
- *Ընկերությունը շահութաբեր է և կարողանում է վճարել մեր պարտատոմսերի տոկոսները և բաժնետոմսերի շահաբաժինները:*
- *Ընկերության ղեկավարներն ազնիվ, աշխատասեր և գործիմաց մարդիկ են:*

- *Ընկերության արժեթղթերը մշտական պահանջարկ ունեն ներդրողների կողմից, և արժեթղթերի շուկայում գների տարօրինակ ու անհասկանալի անկումներ չեն նկատվում:*
- *Ընկերությունը հետևում է կորպորատիվ կառավարման սկզբունքներին, պարբերաբար տեղեկատվություն է հրապարակում իր գործունեության արդյունքների վերաբերյալ և այլն:*

Այս հարցերում կողմնորոշվելու և տարբեր ընկերությունների արժեթղթերի միջև ընտրություն կատարելու համար պետք է ուսումնասիրել մատչելի տեղեկատվական նյութերն ու համեմատել առանձին ոլորտների կամ ընկերությունների գործունեության արդյունավետությունն ու ներդրումային գրավչությունը: Ամեն դեպքում, արժեթղթերում ներդրումներ կատարելուց առաջ, պետք է համեմատել առկա բոլոր ներդրումային հնարավորությունները և որոշել, թե ո՞ր ներդրումներն են առավել համապատասխանում մեր ֆինանսական հնարավորություններին, ներդրումային նպատակներին և ռիսկի դիմակայման կարողությանը: Անհրաժեշտ է նաև խորհրդակցել ՀՀ Արժեթղթերի Հանձնաժողովի, Հայաստանի ֆոնդային բորսայի կամ արժեթղթերի առք ու վաճառքի ծառայություններ առաջարկող մասնագիտացված կազմակերպությունների (բրոքեր/դիլերային ընկերություններ և արժեթղթերի հավատարմագրային կառավարիչներ) համապատասխան աշխատակիցների հետ և ճշտել, թե.

- *Տվյալ արժեթղթերը գրանցվա՞ծ են ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովում և/կամ ֆոնդային բորսայում:*
- *Ֆոնդային բորսայում արժեթղթերի ցուցակման որակական ո՞ր հարթակում են շրջանառվում այդ արժեթղթերը:*
- *Անցյալում ներդրողները բողոքներ ունեցե՞լ են տվյալ թողարկողներից:*
- *Տվյալ արժեթղթերի թողարկողները անցյալում պորբլեմներ ունեցե՞լ են իրենց հաճախորդների, ներդրողների, բորսայի կամ ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովի և այլ անձանց հետ:*
- *Արժեթղթերի և թողարկողների մասին հրապարակման ենթակա ամբո՞ղջ տեղեկատվությունն է մեզ հայտնի:*
- *Արժեթղթերի առուվաճառք առաջարկող անձն ունի՞ մասնագիտական որակավորում և լիազորվա՞ծ է ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովի կողմից լիցենզավորված և ֆոնդային բորսայի անդամ հանդիսացող որևէ բրոքեր/դիլերային ընկերության կողմից:*
- *Տվյալ բրոքեր/դիլերային ընկերությունը կամ արժեթղթերի առուվաճառք առաջարկող անձն ունեցե՞լ է պորբլեմներ ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովի, բորսայի կամ ներդրողների հետ և այլն:*

Ընդհանուր առմամբ, ներդրումային գործնական քայլեր կատարելիս շատերիս անհրաժեշտ կլինի մի շարք հարցերում ստանալ մասնագիտական խորհրդատվություն և աջակցություն: Մասնավորապես, ի՞նչ մասնաբաժիններով և ո՞ր արժեթղթերում տեղաբաշխել ներդրումային միջոցները: Ինչպե՞ս հետևել տեղեկատվությանն ու վերլուծել այն: Ի՞նչ տվյալների հիման վրա և ինչպե՞ս կայացնել որոշումներ բաժնետոմսերի, պարտատոմսերի կամ այլ արժեթղթերի գնման/վաճառքի վերաբերյալ: Ե՞րբ և ի՞նչ գներով գնել կամ վաճառել արժեթղթերը: Ինչպե՞ս ընտրել մեզ սպասարկող բրոքերային ընկերությունը, ձևակերպել գնման/վաճառքի պատվերները և վերահսկել նրանց գործունեության արդյունավետությունը: Ինչպե՞ս հետևել թողարկողների գործունեությանը կամ մասնակցել նրանց կառավարմանը և այլն: Միայն որոշ սակավաթիվ խոշոր ներդրողներ են ի վիճակի մշտապես վարձել համապատասխան մասնագետների՝ վերը նշված խնդիրներով անընդհատ զբաղվելու համար: Բացի այդ, շատերիս ներդրումային միջոցները բավարար չեն նաև դրանց տարալուծված տեղաբաշխման և ներդրումային փաթեթների ձևավորման ու կառավարման համար:

Այս խնդիրների լուծման համար մի շարք երկրներում առանձին մանր ներդրողները միավորում են իրենց միջոցներն ընդհանուր ներդրումային նպատակների շրջանակներում և հանդես են գալիս որպես մեկ միասնական ներդրող: Կոլեկտիվ ներդրումների իրականացման նման ծառայություններ մի շարք

երկրներում առաջարկում են ներդրումային հիմնադրամները (ներդրումային ընկերություններ, փոխադարձ ֆոնդեր, հավատարմագրային կառավարման հիմնադրամներ և այլն), որոնք իրենց կողմից թողարկված արժեթղթերի վաճառքի միջոցով հավաքագրում են ներդրողների միջոցները և դրանք տեղաբաշխում այլ թողարկողների արժեթղթերում:

Մեր երկրում ներդրումային հիմնադրամները լայն տարածում չեն ստացել և մենք դեռևս չենք կարող օգտվել կոլեկտիվ ներդրումների առավելություններից: Սակայն, արժեթղթերի շուկայի զարգացմանը գուզընթաց, ներդրումային հիմնադրամները անշուշտ կձևավորվեն և իրենց արժանի տեղը կզբաղեցնեն ներդրողներին ֆինանսական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների շարքում: Իսկ առայժմ, մեր ներդրումային նպատակների հստակեցումից և արժեթղթերում ներդրումներ կատարելու որոշում կայացնելուց հետո, ՀՀ Արժեթղթերի Հանձնաժողովի և Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից թողարկված ուղեցույց գրքույկների կամ վստահելի անձանց խորհուրդներից օգտվելով, մենք կարող ենք ընտրել համապատասխան բրոքեր/դիլերային ընկերությունը և սկսել մեր ներդրումային գործունեության առաջին քայլերը:

Մեր հիմնական սխալները

Ներդրումային գործնական քայլերից առաջ եկեք որպես ամփոփում ուշադրություն դարձնենք և փորձենք զգուշանալ սկսնակ ներդրողների մոտ հաճախակի հանդիպող որոշ հիմնական սխալներից.

- **Ոչինչ չանելը:** Ոչ մի երաշխիք չկա, որ շուկայում գները կաճեն մեր ներդրումների առաջին օրվա կամ ամսվա կամ նույնիսկ տարվա ընթացքում: Սակայն կա մեկ այլ երաշխիք: Ոչինչ չանելով մենք չենք ապահովի հանգիստ կյանք թոշակի անցնելուց հետո, չենք լուծի մեր ուսման վարձի հարցը և այլն:
- **Ուշ սկսելը:** Ներդրումների հետաձգումը մեր ներդրումային սխալներից երկրորդն է և զիջում է միայն բոլորովին ներդրումներ չկատարելուն: Ինչքան շուտ ենք սկսում, այնքան երկար են «աշխատում» մեր ներդրումները: Եթե մեր տարիքը վաղուց անցել է քսանը, ապա մենք պարտավոր ենք սկսել «հենց հիմա»:
- **Պարտքերը վճարելուց առաջ ներդրում կատարելը:** Եթե մենք խնայաշավում փող ունենք և միաժամանակ պարտքեր ենք վճարում, ապա մեկ անգամ ևս պետք է ստուգենք, թե որի՞ տոկոսն է ավելի բարձր՝ հաշվի առնելով նաև հարկերն ու արժեզրկումը: Պարտքերի հավասարակշռման համար ներդրումային փաստացի եկամուտների տոկոսը հարկերի վճարումից հետո պետք է գերազանցի պարտքի և արժեզրկման տոկոսը: Եթե դա հնարավոր չէ, ապա ներդրումներ կատարելուց առաջ պետք է նախ վճարել պարտքերը:
- **Միայն կարճաժամկետ ներդրումներ կատարելը:** Բացառապես կարճաժամկետ ներդրումներ պետք է կատարել միայն այն դեպքում, երբ մենք իրոք ունենալու ենք ամբողջ փողի կարիքը կարճ ժամանակ անց: Այն փողը, որ մեզ պետք չի գալու առնվազն երեք տարի, լավ կլինի ներդնել հուսալի և կայուն ընկերությունների բաժնետոմսերում: Եթե գալիք տարում մեզ անհրաժեշտ է լինելու կանխիկ դրամ, ապա դրա համար պետք է օգտվենք կարճաժամկետ ներդրումներից կամ խնայողության գործիքներից, ինչպիսիք են պետական կարճաժամկետ պարտատոմսերը կամ բանկային ժամկետային ավանդները:
- **Ապահովությունը:** Եթե մենք երիտասարդ ենք, ապա մեր ազատ ներդրումային գումարների մեծ մասը պետք է ներդրված լինեն արժեթղթերում: Մենք բավականաչափ ժամանակ ունենք շտկելու շուկայի վարուվերումները և քաղել երկարաժամկետ ներդրումների դրական պտուղները: Երիտասարդ տարիքում չի կարելի խուսափել բաժնետոմսեր ձեռք բերելուց: Ավելի մեծ տարիքում մենք ձգտում ենք խուսափել ռիսկերից և ցանկություն ենք ունենում պահել հիմնականում պարտատոմսեր, սակայն բաժնետոմսերը միշտ էլ կազմում են բոլոր ներդրողների ներդրումային փաթեթների գերակշիռ մասը:
- **Կրակի հետ խաղալը:** Տարբեր մարդկանց համար տարբեր տեսակի ներդրումներն են նպատակահարմար: Ուստի, եթե արդեն որոշել ենք ներդրումներ կատարել, ապա նախ պետք է կազմենք մեր ենթադրական ներդրումային փաթեթը: Այդ ժամանակ, ներդրումների շրջահայաց տարալուծման նպատակով, երևի որոշակի մասնագիտական խորհուրդ ստանալու կարիք ունենանք: Ցանկացած դեպքում, խորհուրդ չի տրվում ամբողջ գումարը դնել միայն մի բանի մեջ: Այն կարող է ցանկացած պահին հիասթափեցնել մեզ:

- **Խաղամոլություն, թե ներդրում:** Եթե չենք ուզում մեր բախտը փորձել և օգտվել արժեթղթերի շուկայում արագ գերշահույթներ ստանալու հնարավորություններից, ապա յուրաքանչյուր ներդրումից առաջ պետք է ճշտենք, թե արդյո՞ք ամեն ինչ ենք պարզել տվյալ ընկերության, նրա արժեթղթերի, արժեթղթերի շուկայում տիրող իրավիճակի և մեզ սպասարկող բրոքերային/դիլերային ընկերության վերաբերյալ:
- **Կեղծիքների գրավչությունը:** Պետք է զգուշանալ արագ շահույթի խոստումներից, ներքին տեղեկություններից օգտվելու արտոնությունից, ինչպես նաև որևէ որոշակի ներդրում և գործարք կատարելու հորդորանքներից ու ցուցումներից: Սրանք բոլորը կեղծիքի նախանշաններ են, որոնք հաճախ հրամցվում են բարձր եկամուտների հետ կապված գրավիչ խայծերի միջոցով:
- **Խորհուրդներ և որոշումներ:** Մեզ սպասարկող բրոքերը պարտավոր է խորհուրդ տալ միայն այնպիսի ներդրումների վերաբերյալ, որոնք համապատասխանում են մեր ներդրումային նպատակներին, հնարավորություններին ու ռիսկերի դիմակայման ունակությանը: Ցանկացած դեպքում ներդրումների վերաբերյալ որոշումներ պարտավոր ենք կայացնել ինքներս, քանի որ ոչ ոք պատասխանատվություն չի կրում մեր ներդրումային ռիսկերի համար:
- **Հավաքածուներն ու թանկարժեք իրերը որպես ներդրումներ:** Պետք չէ վստահաբար և մեկընդմիջտ որոշել, որ ոսկեղենը, հին կահույքը, թանկարժեք մեքենաներն ու հավաքածուները ապահովություն և բարեկեցություն են բերելու մեզ գալիք տարիների ընթացքում: Եթե հնարավոր լիներ դրանք օգտագործել երկարաժամկետ ներդրումների համար, ապա արժեթղթերն ու արժեթղթերի շուկան հավանաբար գոյություն չէին ունենա ընդհանրապես:
- **Շուկայական առուվաճառք:** Ներդրումներ կատարելու ամենալավ եղանակը տարալուծված երկարաժամկետ ներդրումներն են: Եթե առանց համապատասխան մասնագիտա կան գիտելիքների և պատրաստվածության զբաղվենք արժեթղթերի անընդհատ առուվաճառքով, ապա մեզ նվազագույնը կհեղեղեն միջնորդավճարները: Այդ դեպքում մենք չենք ստանա այն օգուտները, որ ավելի քիչ ջանքեր գործադրելով ստանում են երկարաժամկետ ներդրումներ կատարողները:

Ամփոփում

Մենք բավականին համբերություն ունեցանք և ներդրումների ուսումնասիրման ճանապարհին կատարեցինք մեր առաջին քայլը: Մենք ականատես եղանք բաղադրյալ տոկոսների «հրաշքին» և համոզվեցինք, որ պարտքերը, ներդրումներ չկատարելը, արժեզրկումը, խաղամոլությունը և ներդրումային սխալները կարող են ի չիք դարձնել մեր երազներն ու ապագայի պլանները: Կազմեցինք նաև ընդհանուր պատկերացումներ խնայողությունների և ներդրումների, ներդրումային հիմնական արժեթղթերի, եկամուտների, ռիսկերի և դրանց հավասարակշռության մասին: Այժմ մենք կարող ենք ճշգրտել մեր անձնական ներդրումային նպատակներն ու հնարավորությունները և մուտք գործել արժեթղթերի շուկա՝ մեզ սպասարկող բրոքեր/դիլերային կազմակերպություն ընտրելու և ներդրումային առաջին գործնական քայլերը կատարելու համար: Հիշենք, որ մեր ապագա բարեկեցությունը ինքներս ենք կառուցելու, և այդ ճանապարհին կատարված գիտակցված ու հաշվարկված քայլերը մեր հաջողության գրավականն են:



Գրքույկը պատրաստված է PricewaterhouseCoopers LLP. ընկերության կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության կապիտալի շուկաների զարգացման ծրագրի շրջանակներում: Այն պատրաստված է Հայաստանի ֆոնդային բորսայի համար: